ՇԱԲԱԹ 5/18 ՕԳՈՍՏՈՍ 1900 ՔՍԱՆ ՓԱՐԱՑ ՈՂՋ Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 23

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ„Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուփ Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

Ստորագրեր. Ժ. ՄԻԻՆԻԹԷ

ՆՈՐ-ՕՐ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ Ղրշ. ողջ

Գահիրէի համար	Տարեկան,		50
»	»	Վեցամսեայ	30
Շրջակայից	»	Տարեկան,	60
»	»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Ֆրանք	18
Վեցամսեայ . .	»	10

ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Րուբլի	7
Վեցամսեայ. . .	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ Թերթին Վարչութեանը վրայ է:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»ի Վարչութեան հետեւեալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրաւիրուի Պատ. բաժանորդներուն ուշադրութիւնը ։

ՆԵՐԿԱՅ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ԿՐՈՂ «ՆՈՐ-ՕՐ»Ի ԸՆԿԱԼԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱՒԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ ։

Այս առթիւ Եգիպտոսի և Արտասահմանի արգոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին վճարել իրենց բաժանորդագինները, նկատելով որ ընկերութեան մը թերթը պահպանելու գլխաւոր միջոցներէն մէկն է բաժանորդներուն կողմէն գտած գործնական քաջալերանքը ։

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Մինչդեռ բոլոր աշխարհը կը պատրաստուի շքեղ արծաթի Յոբելեանը կատարելու Օսմ. Խալիֆային, մինչդեռ տեղական թերթերը — զանազան նկատումներով Թրքասէր—փողար դառնալով Ապտիւլ Համիտի սխրագործութեանց (???) մինչեւ երկինք կը բարձրացնեն զայն, ու երկար ցանկերը կը հրատարակեն Օսմ. Գահակալին ըրած ու ընելիք նախճիրներուն, Վենետկոյ Պատկ. Միաբանութիւնը՝ ալեւոր Նահապետին գողգոջուն ու անզգայ հոգիներուն թելերը թրթռացնող ձայնովը հրաւէր կը կարդայ բովանդակ Հայութեան, մասնակցելու մեծ հանդիսին, որ տեղի պիտի ունենայ 1901 Սեպտ. 7ին, Միաբանութեան Հիմնադիր եւ հայ գրականութեան Վերանորոգիչ անմահ Միխիթարայ վեհապանծ հաստատութեան երկհարիւրամեակին առթիւ ։

Ուստի կը հրատարակենք եւ մեր Պատ. ընթերցողաց լուրջ ուշադրութեան կը յանձնենք բոլոր այն կոչերն ու յայտարարութիւնները, որոնք կը հասնին Անդրիականի Թագուհի կղզիէն ։

ՀՐԱՒԷՐ
ՅՈԲԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ

Նոր Ի.րդ դարուս հետ կը սկսի Գ. դար Մխիթարեան Ուխտիս, զոր երջանիկ Հայր մեր հաստատած է Աստուծոյ և Աստուածամօր նախախնամութեամբ՝ յ'8 Սեպտեմբերի 1701 տարւոյ ։ Փափագելով այս երկուհարիւրամեայ Յոբելեանի յիշատակը՝ ըստ կարի մերում և ըստ տկարութեան՝ արժանաւորապէս կատարել, ի միջոցի լրման և յարման երկու անցեալ դարուց և Գ.ին, յ'8 Սեպտ. 1901, պարտք երախտագիտութեան համարիմք՝ ոչ միայն ծանուցանել մեր պատուական ազգայնոց, որոց բարոյական օգտին նուիրած են Հայր մեր Միխիթար և իր որդիքն՝ իրենց նպատակը, ջանքն և աշխատանքը, այլ և համարձակիմք խնդրել իրենց բարեյօժար կարելի նիւթական նպաստը, ի պէտս (ծախուց) պատրաստութեան հանդիսի և մնայուն Յիշատակաց Յոբելեանին, որոյ համար այլ և այլ գրուոր վայելչազարդ գործք առաջարկուած և սկսուած այլ են ի հրատարակութիւն, ի պատիւ Նախահօրս մերոյ և ի վայելս զինքն և իր գործը յարգողաց, որոց ընծայաբերութեան կամ տրից համեմատ՝ կ'ընէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ Յիշատակներէն, և անկարողաց այլ նպաստելու՝ մնան ձրի բաշխելիք ինչ։

Եթէ լրութիւն Հայոց. ջիրս ինչ տարբեր տեսութիւն ունեցեր է և ունի, սակայն, հարկ է խոստովանիլ, որ գրեթէ առհասարակ ազնուապէս միաբաներ է այս երկերիւրամեայ շրջանին մէջ՝ ի յարգութեան՝ առ Հայր մեր Մխիթար, ճանչնալով զնա մի ի գերագոյն բարերարաց, երախտաւորաց և պարծանաց իւրոց, որոց համաձայն՝ օտարազգիք անգամ տեսողք իր կանգնած և կանոնած վանաց և վարժից, վկայեն գովութեամբ և զարմանօք։

Ձեմք տարակուսիր որ այս Նոր՝ Երրորդ դարուս սկզբան և ընթացից մէջ՝ Նորոգէ Հայրն Մխիթար իր եռաչնորհ հոգին՝ Աստուածսիրութեան, ընկերսիրութեան և իմաստասիրութեան՝ յորդիս իւր, և ըլլայ անդադար բարեխօս վասն Ազգիս, ձայնակցելով իր և մեր Նախնի երանաւէտ Ս. Հարց՝ լուսաւորչաց Հայոց։

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ

Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի տաճկերէն Թրգմանչութեանց Դիւանի Բ. Քարտուղար Մեծ. Տիար Լեւոն Շիշմանեան, որ ծանօթ է արդէն Ազ պապա եւ Միրապը Զեմաճ կրկնակի պարբերական հրատարակութիւններովը, վերջերս եկած է Կիպրոսէն Գահիրէ, Սահայիֆի Հազայից անուն տաճկերէն կիսամսաթերթի մը հրատարակութեան ձեռնարկելու. ձեռնարկ մը որ զըրծբաղդաբար չէ՛ յաջողեր, նկատելով տեղւոյս բնակչութեան ու միջավայրին աննպաստ հանգամանքը ։ Սակայն, յիշեալ ազնիւ երիտասարդը, միշտ հաւատարիմ իր ուխտին, կ'առաջարկէ իր անձնուէր աշխատակցութիւնը «Նոր Օր»ի, խոստանալով հետզհետէ հասցնել մեզ շահեկան յօդուածներ ։ Ներկայ յօդուածը հակիրճ ամփոփում մ'է իր ուսումնասիրութեանց, զորս ըրած է, օգտուելով Երիտասարդ Թուրքերու հետ իր ունեցած սերտ յարաբերութեններէն ։ Մեր յարգելի աշխատակիցը մտադիր է 'ի մօտոյ մեկնիլ 'ի Կիպրոս, ուր նպատակ ունի հիմնելու Միջազգային Ընթերցատուն մը, որուն հասոյթին 25 0)0 ը Կիպրոսի հայ Կրթարան-Որբանոցին պիտի յատկացնէ ։

Սոյն շահեկան յօդուածը կը յանձնարարենք մեր Պատ. ընթերցողաց ։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԻԱՆ

Այս վերջին քանի մը տարիներու ընթացքին մէջ ծայրահեղութեան հասած բռնութեան ու խժդժութեանց չ'կրնալով դիմանալ, հայրենիքը թողլով Արտասահմանի ամեն կողմերը գաղթող հայերուս պէս՝ շատ մը Թուրքեր ալ ստիպուած փախստական եղան. Մուրատ, Ահմէտ Րիզա ու Իսմայիլ Քէմալ պէյերուն պէս սաղանդաւորներ, շատ մ'ընտիր անձնաւորութիւններ, քաղաքային ու զինուորական պաշտօնեաներ, բարձրագոյն վարժարաններու ընթացաւարտ ուսանողներ ու դեռ նոր, քանի մ'ամիս առաջ ալ, Սուլթանին քեռայրը Մահմուտ բաշա. ասոնք ամենքն ալ զգացած են պէտքը բարենորոգման. պաշտօն, տուն, տեղ, ընտանիք թողուցին, սուրերնին մէջքերնուն քակեցին ու համազգեստնին կռնակնուն հանեցին, իրենց անունն ու ազգանունը փոխելով ուրիշ ծածկանուններ առին ու Կ. Պոլսէն փախան ու ցրուեցան Արտասահմանի մէջ, Իտալիա, Ֆրանսա, Կիպրոս, Եգիպտոս, Լոնտրա, ևլն.։

Յանձնախումբեր կազմեցին, օգտակար ու ընտիր հրատարակութեանց ձեռնարկեցին. հայրենասիրութեան կրակը տակաւ արծարծելով ամենուն սրտերը, ամեն կողմ հաւատարմութեան ու ջանքի արգասիքները հետզհետէ երեւան եկան։ Փախստականաց մէջէն անոնք որ գրագէտներ էին, Իսլամի կրօնային սկզբունքները, խալիֆայութեան օրինագիծը, վարչութեան վատթարութիւնն ու կոչումը, ընդարձակօրէն հրատարակելով իրենց լրագիրներուն մէջ, իշխանութեան իշխեցող, ազգին պաշտպան և իսլամութեան ալ պարծանք եղան։ Երբ որ Օսմ. Կառավարութեան գլխուն երկնքի շանթը պատուհասի պէս թափիլ սկսաւ, կառավարութիւնը շլմորած ու շուարած մնաց։ Նախ՝ իր երեսին կարմրութիւնը — եթէ ունէր — աշխարհէ ծածկելու համար քօղ մը քաշեց, ու յետոյ, անյապաղ, զանոնք ձեռք ձգելու համար տեսակ տեսակ զզուելի ու անխոստովանելի միջոցներու դիմեց. ամեն կողմերը պաշտօնատարներ ճամբայ հանելով խոստացաւ անոնց տալ հարիւրաւոր ոսկիներ, բարձ, աստիճան, շքանշան ու պաշտօններ։

Վերջապէս, ճարպիկ ու անուշիկ ձեւերով անոնցմէ մէկ քանիները Կ. Պոլիս բերել տալով յաջողեցաւ Նորէն իր բռնակալ ճանկերուն մէջ ձգել ու այս յաջողութենէն յանհուրս գոհ և ուրախ եղաւ։

Ահա՛ թէ ինչ եղաւ այս վերադարձին հետեւանքը. նախ՝ յանձնախումբը վարկաբեկ եղաւ, նուաստելով համարումը, զոր դեռ նոր սկսած էր շահիլ. երկրորդ՝ գէշ օրինակ դարձաւ կարգ մը ազէններու, որոնք, ապուշ արարածներ, առանց երբեք ըմբռնած ըլլալու երիտասարդ

Թուրքերուն նպատակն ու առանց թափանցել կրնալու անոնց էութեան գաղտնիքը, փախըստական եղած էին պարզ հետեւողութեամբ ու ասոնք, տեսնելով որ ազգին ու տէրութեան պատիւն ու արժանիքը անխղճօրէն կը փոխանակուէին ոսկիներու հետ, բիւրաւոր թշուառներու արիւնովը շաղուած, 'ի վերջոյ, դառնալով պատելով արքունի գանձը լեցուցած ու լռութեան իբրեւ վարձատրութիւն արիւնաներկ ձեռքերէ իրենց կարկառուած այն դեղին բայց արիւնշաղախ ոսկիներուն հետ, իրենք ալ անբարոյացան այս յեղափոխական անանկութեան մէջ։ Այս վիճակը տեւեց ատեն մը և վերջապէս առեւտուրի ձեւ առաւ։ Դատարկապորտներ, զինուորութենէ օձիքնին ազատել ուզողներ, և անօթութենէ բերաննին հոտող կարգ մ'անկումի, մարդկութեան բեռներ, այս կացութեան հանդէպ, օգուտ քաղելով բացուած գանձէ մը դուրս հոսող ու առատ առատ բաշխուող դրամի իրարու ձեռքէ յափշտակել ուզեցին։ Մինչդեռ Յանձնախումբը, կազմութեան օրէն իսկ որոշած էր իր հանրօգուտ ու փրկարար նպատակն ի գործ դնել ամենայն անձնուիրութեամբ և հաստատամտութեամբ, պահանջուած բարենորոգումներն օր առաջ մըտցնել տալով այս հաշած մաշած կայսրութեան մէջ. դժբաղդաբար, կազմակերպողներուն մեծագոյն մասը՝ իր անձնական շահերուն ու նկատումներուն ծառայեցուց սոյն յեղափոխական կազմակերպութիւնն, այնպէս որ իրենց ընտրած ասպարէզին մէջ հաւատարիմ ու միշտ կանգուն մնացողները մեծամեծ վնասներու և զոհողութիւններու ենթարկուեցան։

Կը ցաւինք որ Երիտասարդ Թուրքերը չ'ունեցան բոլոր հարկաւոր կորովն ու քաջութիւնը մինչեւ վերջը մղելու պայքարը, ու չ'յիշեցին ողբացեալ հայրենասէր բանաստեղծ Նամըգ Քէմալ Պէյի հետեւեալ սրտառուչ ու վսեմ հառաչը.

Մուսիրր իմ, սապիթ իմ թա՛ ճան վէրինճէ բալգա խամէթտէ,
Ֆէտաքեարըն նամը գալըր տայիմ գա՛լպի միլլէթտէ։

Յամառ, տոկուն ծառայող եմ ես հանրութեան մինչեւ մահ,
Անձնուրացին անունն՝ ազգին սրտին մէջ վառ կը մնայ.

Ո՜ւր ծառայող, ո՜ւր անձնուրաց. այո՛, ծառայողները բազմաթիւ են, սուրբ ոսկիին ու արդար մեճիտին առջեւ «անկանիմք առաջի քո» մրմնջելով ծնկադրուած երկրպագուներ. անձնուրացի տեղ՝ ազգուրացներ կ'ողողեն նոյն իսկ յեղափոխական հրապարակը . . . ։

Օսմանեան կառավարութիւնը, իր նենգժոտ հնարամտութեամբ անուանի, կասկած չ'արթընցնելու և յոռի օրինակ մը չը տալու համար կարգ մ'Երիտասարդ Թուրքերու, որոնք արտասահման կը գտնուէին, հայրական գորովով ու ներողամիտ գթութեամբ իր գիրկն ընդունեց զղջման արտայայտութեամբ Մայր-երկիր վերադարձողները. այո՛ ընդունեց, սակայն զանոնք արմատախիլ ու բնաջինջ ընելու համար ամենաստոր միջոցներու դիմեց, հեղինակելով նորանոր քստմնելի ոճիրներ, զորս ի գործ դրաւ հիանալի վարպետութեամբ։

Յաջորդ թուով մի առ մի պիտի թուենք բոլոր այն ոճրագործութիւնները, որոնք ամենազօրեան Խալիֆայի մը, Աստուծոյ ստուերին անդառնալի վճիռներովը նախիրադրուած են։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ

Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան Մայր-Դիւանին Բ. ատենադպիրը Մեծ. Տիար Սեդրաք Ստեփան Օտապաշեան, որ առժամապէս Ուատի-Հալֆա կը պաշտօնավարէ կառավարութեան հեռագրատան մէջ իբրեւ Տնօրէն, գեղեցիկ ու ազնիւ գաղափարն ունեցած է, իր այդ կաճառեւ պանդխտութենէն օգուտ քաղելով՝ մարդասիրական հրաւէր մ'ուղղելու Սուտանաբնակ Եւրոպացիներուն, մանաւանդ Անգլիացիներուն, անոնց գըթութեան զգացումներուն ջերմօրէն կոչում ընելով։

«Նոր Օր»ի այսօրուան թուով հրատարակուած կոչը, թարգմանութիւնն է անգլիերէն տպագրուած բնագրին, որմէ 200 օրինակ ղրկուած է Ուատի-Հալֆա, ըստ բաղձանաց յիշեալ որբասէր հայրենակցին, եւ ըստ հրահանգի տեղւոյս Որբասիրաց Ընկ. Վարչութեանը, որուն կնքովը վաւերացուած են բոլոր օրինակները, ու պիտի մատուցուին զանազան օտարազգիներու, Մեծ. Տիար Սեդրաք Ստեփանի ձեռամբ։

Նոր-Օր իր ջերմագին խնդակցութիւնները խառնելով Որբասիրաց ընկերութեան շնորհակալեաց զգացումներուն հետ, կը փութայ սոյն գեղեցիկ առթիւ չեշտելու այսպիսի ազնիւ ջանքերու պէտքը, առանց որոյ կարելի չէ՛ որ պատսպարուին ու դաստիարակուին Մայր-Հայրենիքին բիւրաւոր թշուառ որբուկները։

ԿՈՉ

Ներկայիս մէջ պատերազմէ առաջ եկած աղէտներուն բերմամբ բնական ու քաղաքական չարիքներ սովորական բաներ դարձած են. ու հիմայ, 1871 էն ի վեր մարդասիրութիւնը կը նկրտի հնարաւոր չափով ամոքելու տառապող ժողովուրդներուն թշուառութիւնները։ Անտարակոյս, չ'կայ երկիր մը մարտիրոսացած, որ իր վշտերովն ու կարեկցելի կացութեամբն այնչափ շահագրգռիչ եղած ըլլայ որչափ Հայաստանը, որ կը կոչուի Մարդկութեան օրօրանը։

Ականատես մը միայն կրնայ երեւակայել թէ՝ ի՛նչ սոսկումներ կրած է Հայ ազգը։ Առնուազն 200,000 հոգիներ զոհուեցան վերջին ջարդերուն՝ որոնք գրեթէ ամայացուցին այդ երկիրը։

Անկէց ի վեր, բիւրաւորներ սովամահ եղան. պահ մ'առաջ երջանիկ ու ժպտող տուները հիմայ գերեզմաններ եղած են, ու, աւա՜ղ, Ալեւորն Մասիս՝ աչքի առաջ աւերակներ միայն կը ներկայէ. և ի՞նչ է յուսադրիչը . . . ։ 50,000 փոքրիկ էակներ, զոհեր անգիտակ իրենց անգութ ճակատագրին, որբացած, անպաշտպան ու անտէրունչ, վեր կը բարձրացնեն իրենց անմեղ բազուկներն ու Ձեզ կ'աղերսեն գթալ իրենց ողորմելի վիճակին։

Ստորագրեալ անձը՝ ուրախ է ըսելու թէ ինք՝ Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան Ատենադպիր ընտրուած է։ Նա կը յուսայ թէ՝ պիտի բարեհաճիք գումար մ'ստորագրել իբրեւ նպաստ այն թշուառ որբերուն։

Եգիպտական Մամլով պիտի հրատարակուի արդիւնքը Ձեր հանգանակութեան, որ երախտապարտ պիտի կացուցանէ բովանդակ Հայոց սրտերը։

ՍՏԵՓԱՆ ՍԵԴՐԱՔ

Վատի-Հալֆա, 15 օգոստ. 1900

ԱԶԴ

Տնօրէն խորհուրդս պատիւ ունի 'ի գիտութիւն ազնիւ ընկերաց յայտարարելու թէ, Պ. Մինաս Մարզպանեան (հաւաքիչ առաջնորդարանի ազգ. տրոց եւ Պատ. Աղքատախնամ ընկերութեան) հաւաքիչ կարգուած է ընկերութեանս։

'Ի դիմաց Տնօրէն խորհրդոյ
Որբերու Հոգատար ընկերութեան
Ատենադպիր — Ատենապետ
Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ — Ն. Մ. ԱՂԱՋԱՐՄ

Ինչպէս կը տեսնուի պաշտօնական հրաւէրէն, Աղէքսանդրիոյ Պատ. Թաղ. խորհուրդը նախաձեռնութիւն յոյց կուտայ վայելուչ յարգանք մ'ընծայելու հայ ազգին համակիր կոչուելու չափ ազնիւ գտնուող Իտալիոյ ողբացեալ Թագաւորին յիշատակին, Հոգեհանգստի պատարագ մատուցանել տալով եկեղեցւոյն մէջ։

Ստացած ենք Աղէքսանդրիոյ Պատ. Թաղ. Խորհրդոյ կողմէն հետեւեալ պաշտօնական հրաւէրը, զոր կը հրատարակենք ի գիտութիւն Գահիրէբնակ ընթերցողաց։

. . . Խմբագրութիւն
«Նոր Օր» լրագրի
Գահիրէ.

Տիար,

Կը խնդրեմ որ բարեհաճիք ներկայ գըտնուիլ Հոգեհանգստի պատարագին, որ պիտի մատուցուի եկեղեցւոյս մէջ, յառաջիկայ կիւրակէ օգոստ. 19 ժամն առաւօտեան 10ին ի յիշատակ Ն. Վեհ. Ումպէրթօ Ա. ի։

Հաճեցէ՛ք, Տիար, ընդունիլ հաւաստիքը իմ ամենաբարձր համարման։

Առժամ. Փոխ-Ատենապետ
Հայոց Թաղ. Խորհրդոյ
Գ. ՄԵԼԳՈՆԵԱՆ

Այս առթիւ պաշտօնապէս հաղորդուած է «Նոր Օր»ի Վարչութեան Պատ. անդամ Մեծ. Տիար Գառնիկ Զպուգճեանի, յանուն «Նոր Օր»ի Վարչութեան ներկայ գտնուիլ սոյն հանդիսին։

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ

Կը գալարին ալիքները խոժոռ վիհին
Ու խոր ալքէն դուրս կը պոռթկայ բողոքը հին.
Խարակները՝ խրոխտ, խեռ ու վէս գըլուխ ցըցած՝
Հոգեւարքը փրփուրներուն կը դիտեն ցած.

Ալիքները խաժ՝ կը հաչեն երկինքն ի վեր,
Երկինքը կարծր կապարէ կամար կայեր՝
Խուլ, կը ծաղրէ գալարումներն Ովկիանուն,
Որ ժայռերուն կ'երթայ մեռնիլ ոտքը, հեռուն.

Խոժոռ նայուածք կը թաւալէ չուրջն Ովկիան,
Ինքզինք կուզէ հուժկու տիտանն անհունութեան,
Ջո՛ւր կը մռնչէ, թուք փրփուրներն երեսն ի վեր
Միշտ կը ժայթքէ լերկ ժայռերուն այն աներեր։

Վիհին արգա՛նդն է կրողը վէրքը Մարդկութեան.
Ալիք՝ լալիք քերթողներուն յաւերժական.
Ժայռերն՝ անգութ բռնակալները դարերուն,
Փրփուրք՝ լուտանքն հէք ամբոխին, ըստրուկ, նըկուն։

ԲԱՆԱՍԷՐ

ՀԱՆԴԷՍ

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ
ԵՒ ՔՆՆԱԿԱՆ

Կը հրատարակուի երեք ամիսն անգամ մը,

տարեկան չորս գիրք

Տնօրինութեամբ

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ

Եւ աշխատակցութեամբ ազգային եւ օտար արեւելագիտաց

ԲԱՆԱՍԷՐ ի տարեկան գինն է 20 ֆրանք—8 րբլ. վեցամսեայն՝ 10 ֆր. — 4 րուբլի։

Մէկ գիրքը կ'արժէ 6 ֆրանք։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է։

ԲԱՆԱՍԷՐ ը շատ քիչ քանակութեամբ տպուելուն համար կը խնդրուի որ բաժանորդ գրուելու փափագ ունեցողները ժամ առաջ յայտնեն իրենց հաճութիւնը։

Մեր հասցէն է՝

BASMADJIAN

112, Bd. Rochechouart PARIS

ԼՐԱՔԱՂ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴՈՂԸ. — Կ. Պոլսէն հասած վերջին լուրերէն կ'իմանանք թէ՝ Իտալիոյ Թագաւորին եղերական մահուանէն ու Փարիզի մէջ Պարսից Շահին անձին վրայ գործուած սպաննութեան փորձէն 'ի վեր Սուլթանը սոսկալի դողի մը մէջ է։
Արդէն մասնաւոր միջոցներ ձեռք առնուած էին յայտնի այցելուներուն նկատմամբ, որոնք ամեն ուրբաթ Բաշիքթաշի աղօթքին ներկայ կը գտնուին։ Հիմակ ալ կը լսուի թէ՝ Ապտ-Իւլ-Համիտ, Ումպէրթօյի սպանման լուրին առնելէ յետոյ՝ պալատէն ճամբած է իր ծառայութեան մէջ գտնուող բոլոր Իտալացի պալատականները, ծառաները ու բանուորները։ Ոստիկանութեան մեծ մտահոգութիւն կ'ասթէ այս պահուս Կ. Պոլսոյ մէջ ներկայութիւնը 35 Իտալացի գործաւորներու, որոնք գործ փնտռելու կ'երթային Օտէսա, եւ որոնք, Ռուսական չուգենաւը չընդունելով՝ Կ. Պոլիս կը մնան հիմայ։

ՄՈՒՇԻՐ ՃԷՎԱՏ ՓԱՇԱՆ. — Նախկին Մէծ-Եպարքոսը մեռաւ ամսոյս 10 ին։

ՍՈՒԼԹԱՆԸ ՀԻՒԱՆԴԱՑԱՒ. — Զրոյց կայ թէ՝ Համիտ այս վերջին օրերու գէպքերէն խորապէս զգածուած՝ անցեալ երկուշաբթի օրը, Օգ. 6ին մարած ինկած է Եըլտըզի պարտէզներուն մէջ ու անկից ի վեր անկողին կը պահէ։ Բ. Դուռը բացարձակապէս կը հերքէ այս լուրը։

ԻՐԱՏԷ ՄԸ. — Սուլթանը ծովային նախարարին հրամայած է Ալման գործարաններուն հետ բանակցիլ վեց զրահաւորներու շինութեան համար։

ՀԱՅԵՐՈՒ ՋԱՐԴ. — Եւրոպական թերթերը կը գրեն որ Պիթլիսի հրամանատարը զօրագունդեր արձակած է Սպաղանք հայ գիւղի վրայ եւ քիւրդերու օգնութեամբ 200 այր, կին ու տղայ ջարդել եւ գիւղն ալ այրել տուած է։ Նոյն գաւառակի ուրիշ երեք գիւղեր ալ թալլուած են։ Ու այս ամեն խժդժութիւնները կատարուած են այդ գիւղերուն մէջ յեղափոխական գործիչներ փնտռելու պատրուակով։

Ն. Բ. ԽՏԻՎԸ. — Մայիէ Սանիյէի ստացած լուրերը կ'ըսեն թէ՝ Ն. Բարձրութիւնը Պուտաբէշթ է հիմայ, քաջառողջ վիճակի մէջ։

Զրոյց կը շրջի. Գահիրէ թէ՝ Խտիվը յառաջիկայ շաբաթ Եգիպտոս պիտի վերադառնայ, բայց ասի դեռ պաշտօնապէս ստուգուած չէ՛. իբր սոսկ տեղեկութիւն հաղորդուած է « Ֆար տ'Ալէքսանտրի » ի։

Սակայն ասի ստոյգ է որ, Վեհապետին համար, ե՛րբ ալ վերադառնայ, մայրաքաղաքիս բնակչութիւնը փայլուն ընդունելութիւն մը պատրաստած է։

ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ. — Մայիէ Սանիյէն 60 հրաւիրագիրներ ուղղած է պաշտօնական մեծ ճաշկերոյթին համար, որ տեղի պիտի ունենայ օգոստ. 31ին Րաս Էլ-Դինի մէջ, Սուլթանի գահակալութեան քսանհինգամեակին առթիւ։

Երեկ ուրբաթ, ժամը առաւօտ. 9 ին Իսմաիլիյէի կեդր. Աֆրիկէի Ասպետութեան մէջ, « Զ.քեզ Աստուած » ով հանդիսաւոր պատարագ մ'եղաւ Վեհ. Ֆրանսուա Ժօզէֆ Կայսեր ծննդեան 70րդ տարեդարձին նախատօնակին առթիւ։

ԿԻՐԱԿԻՆ ՈՒ ԱՐՔԱՅԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ. — Հանրային նախապաշտութիւնը կ'ուզէ որ ուրբաթ ըլլայ աղետաբեր օրը հասարակ մահկանացուներուն համար. սակայն վեհապետներուն ու պետութեան վարչապետներուն համար կիրակին է երկիւղալի օրը։

Ումպէրթօ Թագաւորը կիրակի օր առաւ մահացու հարուածը. 1878 մարտ 17ին, կիրակի օր մ'էր, քիչ մնաց որ իյնար Բասսանանդէյի դաշունին տակ. դարձեալ կիրակի օր մը, 1893 մարտ 25ին, Մոլեռանդ Պէքաթին փորձած էր անոր վրայ յարձակելու, զանի սպաննելու համար։

1820 Փետր. 13 ին, լուվէլ Օրէրայի դրան առջեւ սպաննեց դաշունի հարուածով մը Պէրրիի դուքսը։

1881 Մարտ 13 ին, Աղէքսանդր Բ. Զարը ռմբահար եղաւ. 1894 ին Յունիս 24 ին, Նախագահ Գարնօն դաշունով զարնուեցաւ Գասէրօյէն, ու այդ օրերուն բոլորն ալ կիրակի էին։ Դարձեալ կիրակի էր 1897 ին Սպանիոյ նախարարապետին սպաննուած օրը։

ԷՄԻՆ ՓԱՇԱ. — Տեղական Էլ-Մուայեատ օրաթերթին մէջ գրուած է թէ՝ Վանայ կուսակալութեան մէջ վրանաբնակ Հայտարան ցեղախմբին « ետ Էմին բաշան որ Հայկական Ջարդին մէջ, ամենատխուր դեր մ'ունեցած ըլլալով դատապարտուած եւ բանտարկուած էր, վերջերս կայսերական ներմամբ արձակուած է։ Այս լուրին առթիւ Իւմիտ տաճկերէն թերթը կը յաւելու.

Այս մարդուն ներուելէն կը հասկցուի թէ՝ Սուլթանը դարձեալ արեան ծարաւ կ'զգայ, աւետիս՛ ուրեմն թէ՝ մեզ եւ թէ մեր Հայ հայրենակիցներուն։

—Կ. Պոլսէն Օգոստ. 9 ին կը գրեն թէ՝ Սուլթանը դեսպաններէն մասնաւորապէս խնդրած է որ հրաման տրուի պահականաւերուն թնդանօթ չ'արձակել Ումպէրթօ Թագաւորին թաղման օրը, որպէսզի մայրաքաղաքին բնակչութիւնը թնթանօթի որոտումներէն չը խռովի։

ՍՈՒԼԹԱՆԸ ՈՒ ՔՐՈՒՓԻ ՏՈՒՆԸ. — Թուրքիոյ Սուլթանը ութ զրահաւորներու ապսպրանքը յանձնեց Քրուփի տանը, թէ եւ ասոր կողմէն պահանջուած գումարը 90000 ոսկի աւելի էր քան անգլիական տուներունը։

Շատ մը տուներ այս գործին համար կը մրցէին եւ Քրուփի առաջարկը միւս բոլորին առաջարկներէն շատ բարձր էր. 'ի մէջ այլոց, Սըր Ու. Գ. Ամսթրօնկէն, Ուիթ-վօրթ եւ ընկ. էն։ Ասկէ մ'իվեր, Սուլթանը պաշտօն տուած էր Մասնախումբի մը, զանազան առաջարկները սերտելու եւ լաւագոյն թնթանօթներն ընտրելու։

Յանձնախումբը Յունիս 9 ին գումարման մէջ որոշեց միաձայնութեամբ նախընտրութիւն տալ Արմսթրօնկի ձուլարաններուն։ Սուլթանը հակառակեցաւ գնոց ահագին տարբերութեան դէմ, բայց վախնալով վիրաւորել կայսեր դիւրազգածութիւնները, զիջաւ։

Զուգելով յամենայն դէպս ետ առնել իր խոստումը զոր ըրած էր Կ. Պոլսոյ գերմ. դեսպանին, Քրուփի տունէն գնելու զրահաւորներուն թնդանօթները, որոշեց Գերմանիա ղրկել իր բաշաներէն մէկը (Թուրքիոյ ծառայութեան մէջ գտնուող գերման սպայ մը)։
Սպան պատգամագիր մը կը տանի կայսեր։ Այս նամակին մէջ, Սուլթանը կը խնդրէ կայսրէն իր բոլոր ազդեցութիւնը բանեցընել Քրուփի տան վրայ, որպէս զի Արմսթրօնկի տունէն առաջարկուած գիներովը ընդունի։ Սուլթանին հասած պատասխանը կ'ըսէր թէ՝ Ն. Վ. Կիյօմ Կայսեր յատուկ խնդրանքով Քրուփի տունը հաւանած է 80000 ոսկիի զեղչ մ'ընելու։

Այս լուրին վրայ Սուլթանը հրաման տուաւ Մասնախումբին ստորագրել Քրուփի տան նպաստաւոր Մազպաթայ մը։ Մասնախումբին նախագահը մերժեց, նկատելով ահագին տարբերութիւն երկու առաջարկներուն միջեւ, եւ չուզեց իմացուց գերմանական տան ներկայացուցչին թէ՝ խնդիրը նորէն պէտք էր յարմար առթիւ վճարանութեան դրուիլ։ Այն ատեն կատղած, Սուլթանը հրաւիրեց Մասնախումբը Եըլտըզի Պալատը եւ նորէն հրամայեց Մազպաթայի խմբագրութիւնը, աւելցնելով թէ՝ Մասնախումբին անդամներէն եւ ոչ մէկը պիտի դուրս ելնէր Պալատէն, մինչեւ որ օրինաւորապէս չ'ստորագրէր յիշեալ Մազպաթան։ Շատ անդամներ այս հրամանին չ'ուզեցին հնազանդիլ, բայց դժբաղդաբար, նախագահը, խիստ տկար մարդ մը Սուլթանին բարկութենէն վախնալով, դրաւ իր ստորագրութիւնը. անմիջապէս Մասնախումբին միւս անդամներն ալ հետեւեցան անոր օրինակին։

Անհաւասիկ փայլուն ապացոյց մը Սուլթանին ու Կէյզէրին միջեւ հետզհետէ ամրապնդուած մտերմական յարաբերութեան, ուսկից բնական է թէ՝ տուժողը միշտ Թուրքիոյ գանձն է, իսկ շահագործողը անշուշտ Գերմանիան է որ բնաւ առիթ չը փախցըներ իր շահադիտական ձգտումներուն յագուրդ տալու, Սուլթանին բարեացակամ հովանիին ներքեւ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲՐԷԹՕՐԻԱ 16 Օգոստ. — Սըր Ի. Պըլըր վերջապէս հասաւ միացաւ զօրավար Ֆրէնչի հետ։

ԴԻԷՆ-ՑԻՆ 16 Օգոստ. — Դաշնակիցք առին Ձանկ-Ձիաւ-Ուան. քիչ մարդու կորուստով, մինչդեռ Չինները 500 հոգի կորսնցնելով մնացեալները փախան։

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ 16 Օգոստ. — Ծովակալ Րեմի կը հեռագրէ թէ՝ Թունկ-Շուն գրաւեցին դաշնակիցները 12 ին։

ԼՈՆՏՐԱ 16 Օգոստ. — Ծովակալ Սէյմուր հրամայեց Շանկայի դուրս բանակող զօրագնդերուն դէպ 'ի Չինու հիւսիսակողմը յառաջ խաղալ. ասոր վրայ միւս երկիրներու հիւպատոսները հեռագրեցին իրենց կառավարութեանց թէ՝ հնդկական գնդերուն քաշուիլը՝ քաղաքը վտանգի պիտի մատնէ, ուստի կը պնդեն որ ուրիշ օտար զօրագնդեր անմիջապէս ցամաք ելնեն։

Ս. ՊԷՏՐՍՊՈՒՐԿ 16 Օգոստ. — Ռուսական մամուլին հաղորդուած զեկուցագիր մը՝ կառավարութեան փափաքը կը յայտնէ բարեկամական յարաբերութիւններ վերահաստատելու Չինու հետ։

ԼՈՆՏՐԱ 16 Օգոստ. — Քանի մ'անգլիական ու ամերիկեան լրագիրներ ու հասած հեռագիրներ կը ծանուցանեն թէ՝ դաշնակից զօրագնդերը Բէքին մտած են եղեր երկուշաբթի օրը, եւ թէ՝ օտար դեսպանատանց օգնութեան հասած են։

Բայց դեռ երբէք չ'ստուգուեցաւ այս լուրը. միայն Թիէն-Ցինէ 18 ին քաշուած հեռագրէ մը կ'իմացուի թէ՝ զօրագնդերը, ամենափոքր կորստով մը, Թու-Հօնկ-Քիաւանի տիրած են, մինչդեռ Չինները 500 հոգի կորսնցուցած են։

ԴԻԷՆ-ՑԻՆ 16 Օգոստ. — Չինական աղբիւրէ տարաձայնութիւն կայ թէ՝ դաշնակիցները Բէքին հասած են այս վերջին երկուշաբթի օրը, ու բանի մտած են քաղաքը, յաջորդ օրն ալ օգնութեան հասնելով դեսպանատանց։

ԼՈՆՏՐԱ 16 Օգոստ. — Թայմզ Շանկ-Հայէ կ'իմանայ թէ՝ Մեծն-Բրիտանիա հրամայած է օրաձգել զօրագնդերուն ցամաք հանուիլը, վախնալով միջազգային բարդութիւններէն։

ԼՈՆՏՐԱ 17 Օգոստ. — Դաշնակիցներն առանց ընդդիմութեան 15 ին մտան Բէքին։ Եւրոպական դեսպանատունք ազատեցան։

ԴԻԷՆ-ՑԻՆ 17 Օգոստ. — Մանրամասն լուրեր չը հասան, բայց զրոյց կայ թէ՝ Կայսրուհին, Իշխան Թուան ու Պոքսըրները փախած են Հսիան-Ֆու Օգոստ. 7 ին։

ՇԱՆԿ-ՀԱՅ 17 Օգոստ. — Անգլիական զօրագնդերը վաղը պիտի ցամաք ելնեն։

ՎՐԻՊԱԿ

Տիար Ա. Պալեանի կողմէն Նոր Օրի նախընթաց թուով հրատարակուած « Մեր ընկերութիւնները » յօդուածին մէջ մոռցուած է հետեւեալ հատուածը.

« Զոր ինչ ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ »։

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿԴԱՐԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ազգն, իրեն դարաւոր ցաւերուն մէջ, ունեցեր է թերեւս շատ սփոփիչներ. բայց ոչ միայն գործն եղած է այնչափ փրկարար, այնչափ տեւող, որչափ այն մեծ Սեբաստացւոյն, որ անուան հետ՝ գործով ալ եղաւ ՄԽԻԹԱՐ։ Ամբողջ երկու հարիւր տարիներ անցան այն օրէն ի վեր, յորում նա հիմը դրաւ՝ Կ. Պոլսոյ մէջ իրեն անունը կրող հաստատութեան, զոր յետոյ բարձրացուց Մեթոնի մէջ, եւ վերջը՝ Վենետկոյ Սուրբ Ղազարու կղզեկին մէջ՝ հրաշակերտեց զայն։ Ինքն Մխիթար գծեց այդ հաստատութեան ուղղութիւնը, որով պիտի դիմէր իրեն նպատակին, այն է՛ մտաւոր եւ բարոյական վերականգնումն եւ զարգացումն ազգին. եւ որուն համար չի խնայեց ինքն ո՛եւ է ճիգն եւ զոհողութիւն։ Ո՞վ չգիտեր՝ թէ այդ երկա՛ր շրջանին՝ ո՛րչափ դժուարութիւնք եւ խոչընդակներ ընդ առաջ ելան Մխիթարայ կանգնած Միաբանութեան, որք սակայն չի կրցան կասեցնել կամ խոտորեցնել զայն իրեն ուղղութենէն։ Ո՞վ չգիտեր թէ նա՝ իրեն Հիմնադրին ոգւով ներշնչուած՝ ո՛րքան գրական եւ կրթական ծառայութիւններ մատոյց ազգին, մեծ գրագէտներ եւ գործիչներ ընծայելով անոր, եւ առհասարակ հանդիսանալով լուսաւոր յառաջադիմութեան մը, որուն նշոյլները ազգիս ամենէն աւելի հեռաւոր եւ նոյն իսկ իրենց ազգայնութիւնը մոռցող խաւերուն մէջ թափանցեցին։ Հա՞րկ է ըսել թէ ինքն եղաւ որ Եւրոպացւոց ծանօթացոյց հայ ազգը, իրեն ազնուագոյն տիպարին մէջ, իրեն հին ճոխ գրականութեամբ եւ դարուս նորանոր արուեստից եւ գիտութեանց ձկտող մտքով, եւ որոնց մէջ գրեթէ արեւմտեան հաւասարաքայլ կ'ընթանայ։

Արդ, գալ տարի, 1901ի Սեպտեմբերի 7ին (ըստ Ն.Տ.ի)՝ լրանալով ճիշդ Միաբանութեանս հիմնարկութեան ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ շրջանը, անհրաժեշտ պարտք կը համարինք տօնել Հիմնադրիս Մխիթարայ եւ ազգիս

Բարերարին յիշատակը, որուն մեծութեան համեմատ՝ տակաւին արժանաւոր պսակ մը, պարտուպատշաճ յարգանք մը ընծայուած չէ ։ Յատկապէս այս առթիւ լոյս պիտի տեսնեն Միաբանութեան տպարանէն հետեւեալ գործերը ։

1. ՀԱՅԱՊԱՏՈՒՄ գիրք, որ է Հ. Ղ. Ալիշանին հաւաքած Հատուածք պատմութեանց մեր հեղինակաց, ժամանակագրական կարգաւ, մինչեւ յ՛ԺԷ դար. համառօտ աշխարհաբար ծանօթութեամբք ։

2. Լիակատար կենսագրութիւն Մխիթարայ Աբբահօր, պատկերազարդ ։

3. Մխիթարեան Միաբանութեան 200 ամեայ գործունէութիւնն եւ նշանաւոր գործիչներ, նոյնպէս պատկերազարդ ։

4. Համառօտ պատմութիւն Մխիթարայ վարուց եւ գործերուն, նոյն հանդիսի առթիւ ձրիաբար բաշխելի ։

5. Մխիթարայ եւ իրեն Միաբանութեան գործունէութեան պատմութիւնը, գաղիերէն լեզուով ։

6. Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբբ. իտալ. լեզուաւ ։

6. Հատք ի բանից Մխիթարայ ծառային Աստուծոյ, քաղուած իրեն տպուած եւ անտիպ գրութիւններէն. նոյնն անգղիերէն ։

8. Պատկերազարդ մեծադիր թերթ մը, կատարուելիք հանդիսին պատկանող. եւ այլն ։

Դարձեալ փափագելի է մեզ, թէ եւ մեր կարողութենէն վեր, ուրիշ միայն կոթողով մ՛ալ յաւերժացնել Մեծ Սեբաստացւոյն յիշատակը, որուն վրայ կարդան հաւասարապէս դրագէտք եւ ոչ գրագէտք, ազգայինք եւ օտարք, ներկայք եւ ապագայք. որ փայլեցնէ ոչ լոկ Մխիթարայ մեծութիւնը կամ հանճարը, այլ այն ցեղին՝ որ կրցաւ —եւ կրնայ նոյնպիսի պարագայի մէջ— այսպիսի մեծ ծնունդներ յառաջ բերել ։

Անտարակոյս ազգայնոց ազնիւ զգացումները վիրաւորած պիտի լինէինք, եթէ ներքին անձուկ շրջանակի մը մէջ ամփոփելով այն հանդէսը, զուտ վանական նկարագիր մը տայինք անոր եւ ոչ ազգային. մինչդեռ ամեն Հայ՝ մեզի հաւասար՝ իրաւունք ունի իրենն ըսելու զՄխիթար եւ անով պարծելու ։ Ուստի այսու կը ծանուցանենք հայ հասարակութեան մեր դիտումները եւ ծրագիրը, որպէս զի անոնք որ կը փափագին կարենան մասնակցիլ հանդիսիս եւ միջոցներ հայթայթել, որով ըստ կարելւոյն աւելի հանդիսապէս եւ արժանաւոր կերպով կատարուի յիշատակը այն մեծ մարդուն, որ Եւրոպացւոց անգամ հիացման եւ յարգանաց առարկայ դարձեր է ։ Որոնք որ կը ցանկան այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ կամ ո՛ եւ է կերպով աջակցիլ, կարող են ուղղուիլ այն Յանձնաժողովոյն, որ յատկապէս այն հանդիսին համար կազմուած է, եւ որուն հասցէն է

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
Յոբելեան Հանդիսի
Վենետիկ — Ս. Ղազար

LA COMMISSION POUR LES FÊTES
JUBILAIRES DEUX-CENTENAIRES
VENISE (Italie) St. LAZARE

ԲԱՑՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՊԱՏՈՒՄԻ
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ
Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ

Գործս է Հաւաքումն պատմչաց Հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչեւ ԺԷ դար։ Հաւաքիչն աշխարհաբար լեզուաւ կը յաւելու բացատրութիւններ և ծանօթութիւններ իւրաքանչիւր իւրին ներքեւ։

ՀԱՆԴԱՄԱՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ. քառածալ մեծադիր, շքեղ թղթոյ վրայ, և պատկերազարդ։

Բաժանորդագինն է 30 ֆրանք կանխիկ ճանապարհի ծախքը մեր վրայ։ Յետ առարման պիտի վաճառուի 50 ֆրանքի։

Բաժանորդագրութեան ժամանակ գին չի լինիր. բայց 10 օրինակ բաժանորդ գտնողին օրինակ մի եւս կը տրուի ձրի։

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

«ԼՈՒՍԻՆԵԱՆՔ»

ԳՐԵՑ
ՄԵԼԻՔ Ս. ԴԱՒԻԹ ԲԵԿ

160 էջ, տպարան Վիեննայի Մխիթարեանց 1900. գինն է 2 Ֆր.

Կը ծախուի հետեւեալ պայմաններով՝

Չորս հարիւր օրինակ Արաբկիրի Որբանոցին համար. երեք հարիւր օրինակ Կիպրոսի Որբանոցին համար. իսկ մնացած 300 օրինակը հեղինակին համար։

Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իւր ծախքերն հանելու և բարեկամներու նուիրելու համար. իսկ միւս օրինակները բոլորովին անձեռնմխելի են և հեղինակը նուիրած է հայ յիշեալ երկու որբանոցներուն։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպաստ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմավէպ» բացառիկ պրակ մը կը հրատարակէ ։ Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրորդամէթր, լայնք 30 հրդմ.։ Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, եւ ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է ։ Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու չատ ընտիր ։ Կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ ։

«Բազմավէպ»ի այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման Եւրոպական մեծ ազգաց շաբաթական պատկերազարդ թերթերուն ։

Կը տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներու ։

Գինն է ԿԱՆԽԻԿ 2,50 ֆր. կամ 1 րբ. 50 սէնթ ։

Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն մաքն ազնիւ ու գթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին, համեստ լումայ մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու գանձանակին մէջ ։

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ»ի պրակներուն մէջ ։

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանդիմ, փափագողք փութան յղել իրենց ծանուցումները ։

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue « Pazmaveb »
(St. Lazar) VENISE
(ITALIE)

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՏԻԳՐԱՆ Հ. Թ. ՍԱՒԱԼԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Ս. Դարբինեան տպարանէն մաքուր տպագրութեամբ եւ հեղինակին վիմագիր պատկերով զարդարուած՝ ի լոյս ելնելու մօտ է հարիւրէ աւելի էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր չահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման ։ Ինքնակենսագիրն, Զմիւռնիոյ հին ծանօթ գրական դէմքերէն մին, իր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Էօտէմիշ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու բերմամբ՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է գրաւոր եւ մտերմական յարաբերութիւններ, զորս գիտցած է ճարտար եղանակաւ մը խառնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարդալ անձանձրոյթ եւ լարուած հետաքրքրութեամբ ։

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փափագողք կրնան այժմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ դիմելով

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ
Ի Պազար Մուրուր Թիւ 27
ԳԻՆ 5 ԴԱՀ. ՈՂՋ

Le gérant, J. Munier.

ԿՈՒԶԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ

ՈՍԿԻ
ԿՈԹԷՆ ԼԱՐՈՎ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ
ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ
ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ
ԴԻՄԵՑԷ՛Ք

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԿԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենադիւրամատչելի գներէն սկսելով մինչեւ ադամանդազարդ ։ Արծաթ ժամացոյցներ 50 ղրուշէն սկսեալ։ Նիքէլ ռըմօնթուառ ժամացոյցներ 22 ղրուշէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շղթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քնոցի բազմազան բանտիւններ։

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Ղրուշի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'քալեն ։

Ուրեմն դիմեցէ՛ք ուղղակի ։

ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՊԷԼԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ
Տիկնանց եւ արանց
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ազտինի մեծ պողոտային վրայ, Տայիրայի Սանիյէի դիմացը, նախկին ելեկտրական գործիներու վաճառատունը։

Վերջերս Ամերիկայէն հոս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՝ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն։

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաեւ ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով։

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈԴԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գատիկոնը։

Կը բժշկէ բերնի և ակռայի ամեն տեսակ հիւանդութիւնները ։ Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 ։

ՁՈՒԼԻՉ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ
Շարա Մուհամմէտ Ալի, Հապպանիյէ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ եւ արոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, եւն. Յաճախորդները գոհացնող պայմաններով։

ՀԷԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 17 ՕԳՈՍՏՈՍ 1900

6250	3006	1372	4932	5883	48
531	1067	1390	1808	2769	2740
2949	2995	3263	3539	3782	4174
4750	5283	5769	5787	5919	6585
		6603	7225	7489	

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրուր